

## ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ծախապատմական դար.—Որքան ինձ յայտնի է, Վայոց ձորում ինձնից առաջ ոչ ոք հնագիտական նպատակով պեղումներ չի կատարել, կամ եթէ կատարել էլ է, այդ մասին ոչինչ չի հրատարակել, ուստի և ես ստիպուած եմ բաւականա՞նալ այն տեսութեամբ, որ թոյլ են տալիս անել իմ կատարած պեղումները։—

Անցնելով Վայոց ձորի գրեթէ բոլոր գիւղերը, ես բաւականաչափ պեղումներ կատարեցի և գտայ յղկած—քարի (néolithique) և բրոնզի դարին վերաբերեալ շէնքեր և իրեր։

Յղկած քարի դարին վերաբերում են Սուլթան-ֆահատի կոչուած գիւղի աւերակները, որոնք գտնուած են Վերին Դայլախու գիւղից մի և կէս վերստ հեռու, զէպի արևմտաւարու, մի հովտում։ Այս հովտի հարաւային կողմում ձգւող լեռնաշղթայի վերին մասը պատած է ծովային նստոյցքով, որի մէջ եւս գտայ բաւականաչափ ժժականք։ Ժայռի ամենարարժք մասում կայ մի բնական մեծ քարայր, ուր վերջին ժամանակներս Սուլթան անունով մի թուրքի 500 ոչխարներն էին մագաղում, որի պատճառով և այլը, սրա հետ և այս տեղը կոչուել է Սուլթան ֆահատի—Սուլթանի այլ։ Բացի սրանից գիւղում կայ նաև երեք ուրիշ, համեմատաբար փոքր, քարայր։

Աւերակների մէջ նկատուած են երկու պարսպի հետքեր, որ ձգւում են արևմուտքից արևելք, հովտի ուղղութեամբ։ Այս պարիսպների միջև կան բազմաթիւ տներ, որոնք կառուցուած են գետնի մէջ այսպէս՝ բոլորակաձև մանր քարեր են դարսուած, մօտ 3—4 արշին բարձրութեան, որոնց վրայ 3—4 աւաղին, մօտ 4—5 արշին երկարութեան և 1—1 1/2 արշ. լայնութեան քարեր ձգած, իբր կաուր։ Ամէն մի խրճիթ մի սենեակից է և ունի մի դուռն, մեծ մասինը զէպի արևելք բացուող։ Կտրի վրայ էլ մի ծակ կայ, որ իբր պատուհան է ծառայել։ Տեղ տեղ նկատուելի են մանչիրներ, միայն ջարդուած են։ Գիւղի արևմտախախտային կողմում կան բաւականաչափ գերեզմաններ, որոնք փոքրիկ թումբեր են, շուրջը քարերով պատած։ Եւս սրանցից չորսը պեղել տուի, 3—4 արշին խորութեան մէջ դուրս եկաւ միայն մոխիր։ Տների մէջ եւս գտայ մի քարէ մուրճ, երկու քարէ սղոց և մի քարէ դանակ։

Բրոնզի դարին վերաբերեալ գերեզմաններից նշանաւոր են Մոզ քաղաքի աւերակների սահմանում գտնուածները, որոնցից եւ բաց անել տուի միայն իննը: Սրանք բոլորն էլ մի տեսակի էին, գեանի մակերևոյթից մօտաւորապէս 3—4 արշին բարձրութեան և 4 արշին տրամագծով թումբեր, շուրջանակի քարերով պատած. 3—4 արշին խորութեան փորելուց յետոյ դուրս եկան կմախքներ, հիւսիսից դէպի հարաւ ուղղուած, կողքերին պուլիկներ, որոնցից միքանիսը բաւական մեծ էին: Երկու գերեզմանի միջից դուրս եկան նաև ձիու ոսկորներ: Այս գերեզմաններից դուրս եկան նաև հետևեալ բրոնզէ իրերը.—երկու դաշոյն, 9 ճարմանաւ (Tibule) և մի քանի տպարանջան:

Զափազանց նման էին այս կուրգաններին այն միջանիսը, որ եւ գտայ Կնիշիկ գիւղում, մօտաւորապէս 30 վերստ հեռու Մոզից, դէպի արևմտահիւսիս: Այստեղ նշանաւոր էին երկու կուրգան, որոնք գտնոււմ էին զիւղից 1 1/2 վերստ հեռու, դէպի արևմտահիւսիս, միմեանցից 9 սաժէն հեռաւորութեան վրայ: Իւրաքանչիւրը գետնից 4 արշին բարձրութեան էին, մօտ 3 սաժէն տրամագծով: Զորս արշինաչափ խորութեան և մի սաժէն լայնութեան փորելով եւ նկատեցի, որ շուրջանակի քարեր էին դրուած և վերան 5 կտոր մեծ, ասփարակ քարեր դարձած: Սրանց տակից դուրս եկաւ մոխրախառն հող և ապա բացուեց երկու կմախք, երկուսն էլ միմեանց մօտ, հիւսիսից հարաւ ուղղուած: Մինի երեսի վրայ դրուած էր մի դաշոյն, ալ ձեռին տպարանջան և մի մատին 3 մատանի: Միւս կմախքի կողքին դրուած էր մի դաշոյն իրեն պատեանի մէջ: Վերջինիս մօտից դուրս եկան նաև ձիու ոսկորներ: Կմախքների շուրջը շարուած էին պուլիկներ: Միւս կուրգանը միանգամայն առաջինն նման էր, միայն սրա միջից դուրս եկան 4 զանգ և ոսկորներ, անկանոն կերպով ձգուած. նաև մի բրոնզէ տպարանջան և երկու պուլիկ:

Այս զիւղից էլ դէպի արևմտահիւսիս, Քաշիկ գիւղում, եւ բաւականաչափ պեղումներ կատարեցի: Սրանցից ամենանշանաւորն այն էր, որ մի կարաս բացուեց, մէջը մի մարդ՝ պղծած ձեռով դրուած, գէմն էլ մի պուլիկ: Կարասը պարկեցրած էր հիւսիսից հարաւ, և բերանին մի կաւէ խուփ դրուած. մեծութիւնը կըլինէր՝ 1 1/4 արշին: Գիւղից դուրս, միևնոյն ուղղութեամբ, բայց միմեանցից մօտ 100 սաժէն հեռաւորութեամբ կանգնած էին երեք մեծ կուրգաններ: Սրանցից մինը միայն եւ բաց անել տուի.—երեք արշինից աւելի փորելուց յետոյ եւ գտայ մի մարդու կմախք, հիւսիսից հարաւ թաղուած, միայն մօտը ոչ մի իր կամ պուլիկ չկար, այս պատճառով և եւ բաց անել չտուի միւս երկու կուրգան-

ները: Միանգամայն սրան նման զերեզմաններ են բաց արի Մարտիրոս, Փոր և Հերհեր գիւղերում:

Համեմատաբար նորագոյն տիպի զերեզմաններ՝ բաղկացած 4 քարէ տախտակներից, որոնց վրայ դրուած է մի կամ միքանի քար, են բաց արի Գնդեվազ, Կնիշիկ, Օրթաքենտ և Բաշքենտ գիւղերում: Սրանց մէջ լինում էին մի մի կմաքը, հիւսիսից հարաւ ուղղուած, առանց մի որևէ իրի կամ պուլիկի:

Գրեթէ բոլոր կուրգաններում գտնուած զանգերը միջազույիս (միդասեֆալ) էին:

Այս պեղումների արդիւնքից հետևում է, որ Վայոց ձորում բնակութիւնը սկսուել է Դալլախուլուի և սրա շրջակայքում և հետզհետէ տարածուել է գէպի Մոզ, Կնիշիկ, Արփա, մի խօսքով ցածր և տաք կլիմայի տեղերում: ապա աստիճանաբար բարձրացել է գէպի լեռնային գիւղերը: Թէ զերեզմանների շէնքը և թէ մանաւանդ բրոնզէ իրերը ցոյց են տալիս, որ քաղաքակրթութիւնը բաւական բարձր է եղել, մանաւանդ Մոզում, Կնիշիկում և Փորում<sup>1)</sup>:

Պատմական շրջան.—Վայոց ձորի ոչ միայն նախապատմական, այլ և պատմական շրջանի մասին շատ քիչ յիշատակութիւններ կան: Միակ աղբիւրը համարոււմ է Ստեփանոս Օրբելեանի Սիսական նահանգի պատմութիւնը և միքանի արձանագրութիւններ, որոնց հիման վրայ արդէն գծել են Վայոց-ձորի և Օրբելեան տոհմի պատմութիւնը պ. Քալբերունին և հայր Ալիշան: Սրա վրայ մի նոր բան աւելացնել ինձ միանգամայն չաջողուեց, որովհետև նախ նոր աղբիւրներ, ինչպիսին են ձեռագիրների յիշատակարանները, մեծ մասամբ դեռ ևս մնում են անտիպ, հետևապէս և՛ որոշեալ չափով անմատչելի, և երկրորդ՝ Վայոց ձորի բնիկ համարուած ժողովուրդը զրեթէ ոչ մի աւանդութիւն չի պահպանել ոչ Օրբելեան տոհմի և ոչ միւս իշխանների մասին, թէպէտ և Օրբելեան տոհմի իշխաններից միքանիսի՝ ինչպէս Տարսայիճի, Լիւրարիտի, անուններն այժմ էլ բաւական զօրածական են: Աւելորդ համարելով արդէն յայտնիները մի անգամ ևս կրկնել, ես կաշխատեմ նորութիւններ որոնել ո. էջմիածնի և այլ տեղերի ձեռագիրների յիշատակարաններում, և եթէ որևէ բան գտնեմ,

<sup>1)</sup> Այս պեղումները կատարած լինելով Մոսկուայի Կայսերական-Հնագիտական ընկերութեան Կովկասեան ճիւղի յանձնարարութեամբ՝ գտնուած իրերը յանձնեցի նոյն ճիւղին, որ զետեղեց Կովկասեան Թանգարանի հնագիտական բաժնում, իմ գտած միւս իրերի մօտ:

կրչիշեմ Օրբելեանս տունի քնարան նորափանքի նկարագրութեան մէջ, Իսկ այժմ ես կամենում եմ առաջ բերել այն աւանդութիւնը, որ դեռ ես մնացել է Վայոց ձորի բնիկ հայերի մէջ.

Քանահատի գիւղից մի մարդ սիրահարուում է իւր սանամօր բրոջ վրայ, և շատ անգամ թոյլուութիւն է խնդրում Ստեփանոս եպիսկոպոսից՝ ամուսնանալու: Սա թոյլ չի տալիս: Մի անգամ էլ, երբ Ստեփանոս եպիսկոպոսը գալիս է Մոզ քաղաքը, այս երկու սիրահարները գնում են նրա մօտ և աղերսում թոյլուութիւն. սակայն եպիսկոպոսն այս անգամ եւ մերժում է: Բարկութեամբ լցուած այս երկու սիրահարները գիշերը գնում են եպիսկոպոսին սպանելու: Սա քնած է լինում պատռվածքում, Դաւաղիւր ամուսինը բարձրանում է կտուրը, այնտեղից ելնում պատռվածքի առաջ բուսած ծառի վրայ, որպէսզի իջնի ներքե և սպանի եպիսկոպոսին: Սակայն չէնց որ փոքր ինչ մօտենում է, տեսնում է որ եպիսկոպոսը հանգիստ քնած է, բայց բերանից լոյս է բարձրանում. սարսում է, յետ դառնում և ասում կնոջը, թէ ինքը չի համարձակուում դաշոյնը բարձրացնել նրա վրայ, քանի որ նա սուրբ է, նրա բերանից լոյս է բարձրանում: Կինն սկսում է կըրկին համազել, բայց երբ նա վերջնականապէս մերժում է, խընդրում է, որ իրեն կտրից թոկով կախի ներքե, ինքը կսպանէ նրան: Ամուսինը համաձայնում է, թոկը կապում է կնոջ մէջքին և կտրից ներքե կախում: Սա մօտենում է եպիսկոպոսին և դաշոյնը խրում նրա կուրծքը: Հանգիստ քնած եպիսկոպոսը վեր է թոյլում և քաջակնչում, Վայ, ձոր, քար մազուես, մէջիդ շուն բնակուի: Իսկոյն երկնքից քար է թափւում և կտրւում Մոզը. յուլիս ամսին էլ երեք արշինաչափ ձիւն է գալիս և կտտորում բոլոր տնասունները: Վերջն էլ շներ (թուրքեր) են գալիս բնակւում այս ձորի մէջ, որ այնուհետեւ կոչւում է Վայայ-ձոր, որովհետեւ սուրբ եպիսկոպոսը վայ տուեց նրան:

Նոյն աւանդութիւնը գրի է առել Ստեփանոս Օրբելեանը, որ սակայն փոքր ինչ տարբերւում է սրանից: Ուշագրաւ է մանաւանդ նրա վերջին մասը, ուր նկարագրւում է իրր այդ սպանման պատճառով յառաջացած երկրաշարժը. «Եւ կալաւ խաւար շուսփելի զգաւառն ամենայն դաւուրս 40, և շարժումն սաստիկ. զի եռայր երկիրն անկզ զողացմամբ յանդնողց և բարձրանայր մինչև ի վեր. և անդէն իւր գալիս ծովու փուլանիւր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակղէին; տունք և ապարանք զեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին, զետք կորնչէին. և ամենայն տեղի երբեք տատանմամբ. և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին խնեքուստ յանդնողց և ի վերուստ յողոց.

«վաճ ձոր, վայ ձոր», և կենդանոյն ընկղմեցան ոգիք իրրև 10,000, զորս գիտէին և ի թիւ արկին, և զանձանութիցն ոչ ոք գիտէր զամարն. յաղագս որոյ կոչեցաւ անուն զաւառին Վայոց ձորն:

Թէպէտ և Թանահատի վանքում մինչև այժմ էլ ցոյց է տրուում Ստեփանոս եպիսկոպոսի և զրան սպանող ու վերջն ապաշխարող կնոջ գերեզմանները, Թէպէտ և Դալիկ-Թափա լեռան ձագառան րացուածքը և Մոզի, Մալիշկայի, Նաւարի, Բոթանլուի, Հերէրի մօտ Թափուած խանձողի շեղջակոյտերը վկայում են, որ Վայոց ձորում տեղի է ունեցել Կրաքիսային վիժմունք, և թէպէտ ժողովրդի երևակայութիւնն այս բոլորը շատ զեղեցիկ կերպով կապել է Ստեփանոս եպիսկոպոսի սպանման և Վայոց ձորի անուան հետ, սակայն և այնպէս՝ Վայոց ձորի անունը շատ աւելի հին է, քան Ստեփանոս եպիսկոպոսը (+735), քանի որ թէ Նդիշէն և թէ Ղազար Փարպեցին այս դէպքից մօտ երեք դար առաջ զործ են ածել այդ անունը <sup>1)</sup>:

Այս գաւառը կոչւում էր նաև Նդեգեաց ծոր կամ Նդեգնաւծոր Նդեգիս գիւղի անունով, որովհետև սա Սիւնեաց Վասակեան հարստութեան զահերէց իշխանների աթոռանիստն էր:

Վերջին դարերումս այդ անունն այլազգիներից Թարգմանուից Տէրէի ալ-աղըզ <sup>2)</sup> (ձոր եղեգնիի), և փոքր ինչ աղաւաղուիով դարձաւ Դարալագէզ կամ Դարալագնագ, այժմեան պաշտօնական անունը:

ԺԾ. դարի մի գրիչ էլ այս գաւառակին Վարդի ծոր է կոչում, ասելով՝ «չերկիրս վարդի ձորոյ, զոր այժմ Վայի-ծոր և Նդեգիս յորջորջի»:

Նդեգիսում նստող Վասակեան հարստութիւնից յետոյ Վայոց ձորի մեծագոյն մասն ընկաւ Օրբելեան իշխանների տիրապետութեան ներքոյ, որոնք ԺԳ և ԺԴ. դարերի ընթացքում ոչ միայն պաշտպանեցին ու կառավարեցին երկիրը, այլ և շնացրին ու զեղեցկացրին հոյակապ շինութիւններով:

Վայոց ձորի մի մասն էլ ընկաւ Հաղբակեան կամ Վարդանեան Վասակ և սրա որդի Պոռ իշխանների ու սրանց սերնդի իշխանութեան ներքոյ, որոնք գրեթէ մի ամբողջ դար (ԺԴ-ի կիսից մինչև ԺԶ-ի կէսը) քաջութեամբ պաշտպանեցին երկիրը:

Այնուհետև Լանկթամուրի, Շահ-Աբասի, Նազիր-շահի և այլ աշխարհւեր բռնակալների աւերածութեան ներքոյ Վայոց ձորն

<sup>1)</sup> Յովսէփ, որ էր ի գաւառէն Վայոց-ձորոյ:

<sup>2)</sup> Նիշան, Սրտակն եր. 91.

սկսեց զրկուիլ իւր բնակիչներէից և նրա հոյակապ շինութիւններն աւերուիլ:

Նախափերջին դարում Վայոց-ձորը կազմում էր Նախիջևանի խանութեան մի մասը, յետոյ մի առժամանակ յանձնուեց վրաց Աղէքսանդր զահաժառանգին, որպէս տիւր, ապա պարսից տիրապետութեան վերջին տարիներում կապալով էր տրուած Երևանի սարգարին 2000 թուամեով կամ 8000 ր.: Ապա 1828 թուին ընկաւ Ռուսաց տիրապետութեան ներքոյ և համարուեց Նախիջևանի գաւառի մի մասը. ի վերջոյ 1877 թուին Շարուրի հետ միասին կողմեց մի առանձին գաւառ Շարուր-Պարալագեազի անունով, մնալով միանգամայն իւր մի առանձին, ուստիկանական շրջան:

### ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆ

Պարալագեազի ուստիկանական շրջանը բաղկացած է 101 գիւղերից, բաժանուած հինգ շինական հասարակութիւնների.—

| Բոլոր գիւղերը | Ձրեց հայ գիւղեր | Բնակիչները, առն. |
|---------------|-----------------|------------------|
| Քեշիշքեանաւի  | 20              | 7 1158           |
| Ալագեազի      | 20              | 4 874            |
| Գնդեկազի      | 22              | 3 814            |
| Մարտիրոսի     | 18              | 5 769            |
| Ղոզլըլայի     | 21              | 5 863            |
| 101.          | 24.             | 4478.            |

Շրջանի կենտրոնը համարուած է Քեշիշքեանաւ գիւղը, ուր ապրում են շրջանի կառավարիչ ուստիկանը և հաշտարար միջնորդը:

Բոլոր բնակիչների թիւը, պաշտօնական վերջին տեղեկութեան համեմատ, 1902 թուին հասել է 21385 ար. 18136 իգ. ի միասին՝ 39521 հոգի, հետեապէս և՛ իւրաքանչիւր ք. վերստի վրայ 19 հոգի:

### Ըստ ազգութեան եւ կրօնի

|                      |           |          |                |
|----------------------|-----------|----------|----------------|
| Հայեր՝ Լուսաւորչական | 8811 ար.  | 7691 իգ. | իմիասին 16502. |
| Ռուսներ՝ Գրողոսլաւ   | 17 ար.    | »        | » 17.          |
| Վրացի՝ Գրողոսլաւ     | 3 ար.     | 2 իգ.    | » 5.           |
| Թուրքեր՝ Շիաներ      | 11974 ար. | 9983 իգ. | » 21957.       |
| Քրդեր՝ Մահմեդական    | 580 ար.   | 460 իգ.  | » 1040.        |